**ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

**կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին**

«ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի Ջրամատակարարում» ՀՈԱԿ-ը ստորև ներկայացնում է իր կարիքների համար ապրանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀԱՄՄՀՋ-ԳՀԱՊՁԲ-25/7 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2026 թվականի փետրվարի 06-ին կնքված N ՀՀԱՄՄՀՋ-ԳՀԱՊՁԲ-25/7-3 ծածկագրով պայմանագրում 2026 թվականի փետրվարի 25-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի /համաձայնագրի/ պատճենը:

**Փոփոխության առաջացման պատճառ՝** գնման առարկայի ձեռքբերման համար «ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի Ջրամատակարարում» ՀՈԱԿ-ի 2026 թվականի բյուջեով և գնումների պլանով ֆինանսական միջոցների նախատեսում:

**Փոփոխության նկարագրություն՝** «ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի Ջրամատակարարում» ՀՈԱԿ-ի և «Մաքս Շին» ՍՊԸ-ի միջև կնքված ՀՀԱՄՄՀՋ-ԳՀԱՊՁԲ-25/7-3 ծածկագրով Պայմանագրի շրջանակում 2026 թվականի փետրվարի 25-ին կատարված փոփոխությունների արդյունքում հաստատվել են ապրանքի ձեռքբերման դիմաց վճարման ժամանակացույցները՝ համաձայն՝ 2026 թվականի փետրվարի 25-ին կնքված Համաձայնագիր 1-ի Հավելված N 1-ի:

**Փոփոխության հիմնավորում՝** 2026 թվականի փետրվարի 06-ին կնքված N ՀՀԱՄՄՀՋ-ԳՀԱՊՁԲ-25/7-3 ծածկագրով պայմանագիրը կնքվել էր «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն, իսկ «ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի Ջրամատակարարում» ՀՈԱԿ-ի կողմից ապրանքի ձեռքբերման պահանջը չի դադարել և ապրանքի ձեռքբերման համար «ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի Ջրամատակարարում» ՀՈԱԿ-ի 2026 թվականի բյուջեով և գնումների պլանով նախատեսվել են ֆինանսական միջոցներ, որի արդյունքում տեղի է ունեցել փոփոխություն նշյալ պայմանագրի մեջ, պահպանելով պայմանագրի 1.1, 8.5 և 8.16 կետերով սահմանված պահանջները:

Պատվիրատու՝ **«ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի Ջրամատակարարում» ՀՈԱԿ**